Գյուղատնտես

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25 - ՀՈԿՏԵՄԲԵՐ 7 2014 Թ. ԹԻՎ 25 (2047)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ կառավարությունը, Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով, Շիրակի մարզպետարանին է հատկացրել 1.5 մլրդ դրամ: Սա ծրագրի առաջին փուլն է, որով վկայագիր կհանձնվի 215 ընտանիքի: Եվս 252 ընտանիք բնակարանի գնման վկայագիր կստանա ծրագրի իրականացման երկրորդ փուլում: Գործընթացի պատասխանատու է ճանաչվել Շիրակի մարզպետը:

Կառավարությունը փոփոխություն է կատարել իր ավելի վաղ ընդունած որոշումներից մեկում՝ բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի բնագավառի արտոնագրերը համապատասխանեցնելով «Լիցենզիաների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՄ Է ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն Արարատի մարզի Դարակերտ համայնքում մասնակցել է ջերմոցային տնտեսությունների սպասարկման կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը: Կենտրոնը, որի ստեղծման նպատակն է՝ Հայաստանի ջերմոցային տնտեսության ոլորտի զարգացումը, հիմնադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի միջոցով և ԱՄՆ գյուղդեպարտամենտի ֆինանսավորմամբ:

Բացմանը մասնակցում էին Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, ՀՀ-ում արտակարգ և լիազոր դեսպաններ, հյուրեր: «Շատ կարևոր օր է մեզ համար, որովհետև այսօր մենք ներկա ենք «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի հերթական նախաձեռնությանը: «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը 2011-2012 թվականներին հանրապետության մարզերում շահագործման է հանձնել անասնապահության ոլորտի ծառայությունների մատուցման կենտրոններ: Այսօր բացում ենք ծառայությունների մատուցման և սպասարկման կենտրոն՝ բուսաբուծության ոլորտի ֆերմերների համար, որն առաջինն է հանրապետությունում և իր տեխնիկական հագեցվածությամբ լավագույնն է տարածաշրջանում: Սա պետություն և մասնավոր հատված համագործակցության լավագույն օրինակ է: Այս կենտրոնը խթան կհանդիսանա մեր երկրում նորագույն տեխնոլոգիաներով ջերմոցային տնտեսությունների զարգացման համար», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարդարյանը նշել է, որ կենտրոնն անվճար տրամադրելու է մասնագիտական խորհրդատվություն, իսկ գյուղատնտեսական գործիքները վաճառվելու կամ տրվելու են լիզինգային պայմաններով:

Կենտրոնի ստեղծմամբ ֆերմերներին հասանելի կդառնան ոլորտի ժամանակակից տեխնոլոգիաներն ու փորձը: Այստեղ կկազմակերպվեն սեմինարներ ու դասընթացներ՝ հայ և օտարերկրյա մասնագետների կողմից, ինչպես նաև գործնական դասընթացներ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողների համար: Կենտրոնին կից գործում են երեք՝ 125, 250 և 400 քառակուսի մետր մակերեսներով ժամանակակից ջերմոցներ, որտեղ աճեցվում են հիմնականում բանջարանոցային մշակաբույսեր: Դրանք կծառայեն որպես ցուցադրական ջերմոցներ՝ գյուղացիական տնտեսություններում նմանատիպ ջերմոցներ կառուցելու համար: Կենտրոնում տեղակայված ժամանակակից լաբորատորիայի միջոցով կիրականացվեն հողի, ջրի և բույսերի անալիզներ: Եղանակի կանխատեսման նորագույն սարքի միջոցով ֆերմերները կկարողանան կանխատեսել եղանակային փոփոխություններն՝ ապահովելով հողի մշակման արդյունավետությունը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴԼԱՅՆԵԼ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է բրազիլահայ գործարար Սարգիս Կարամեկյանին: Հանդիպման նպատակն էր՝ հայ-բրազիլական առևտրա-տնտեսական կապերի ընդլայնմանը և համագործակցության խորացմանը վերաբերող հարցերի քննարկումը:

Պարոն Կարամեկյանը տեղեկացրել է, որ վերջերս Սան-Պաուլո քաղաքում ստեղծվել է Բրազիլիա-Հայաստան առևտրային պալատ, որը հետաքրքրված է Հայաստանում արտադրվող ագրոպարենային ապրանքների՝ դեպի Բրազիլիա արտահանմամբ: Նա նշել է, որ Հայաստանում գտնվելու ընթացքում ծանոթացել է տեղական արտադրատեսակներից շատերին և համոզված է, որ դրանք կարող են մրցունակ տեղ գրավել բրազիլական շուկայում:

Համակարծիք լինելով հյուրի հետ՝ նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է պարոն Կարամեկյանին 2015 թվականին Սան-Պաուլոյում կազմակերպել հայ-բրազիլական բիզնես-ֆորում, որը հնարավորություն կընձեռի կողմերին՝ ծանոթանալ երկու երկրներում թողարկվող պարենային ապրանքներին և խթան կհանդիսանա գործարար կապերի հաստատմանը:

«Հայաստանն ունի հնարավորություններ՝ Բրազիլիա արտահանելու գինիներ, հյութեր, պահածոներ և այլն: Վստահ եմ, որ հայկական արտադրանքը մեծ հետաքրքրության կարժանանա բրազիլական շուկայում», - նշել է Սերգո Կարապետյանը: Նախարարը նաև նպատակահարմար է համարել մշակել և նախապատրաստել ստորագրման երկկողմ համագործակցության համաձայնագիր:

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Հայաստանի գյուղատնտեսության բնագավառում գործող և հետագա ծրագրերը քննարկելու նպատակով, ընդունել է Ավստրիայի զարգացման գործակալության գլխավոր տնօրեն Մարտին Լեդոլտերին և Հարավկովկասյան տարածաշրջանի ծրագրերի ղեկավար Գյունտեր Ջիմերին:

Հանդիպման սկզբում նախարարը շնորհավորել է հյուրերին՝ Երևանում Ավստրիայի զարգացման համագործակցության գրասենյակ հիմնելու առթիվ:

«Համոզված եմ, որ գրասենյակի բացումը լայն հնարավորություն կընձեռի՝ երկկողմ բազմաբնույթ համագործակցությունը զարգացնելու համար և կնպաստի հայ-ավստրիական հարաբերությունների խորացմանը, հատկապես՝ գյուղատնտեսության ոլորտում», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

➪2

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՈԼՈՐՏԻՑ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ֆրանսիայի Ազգային աշխարհագրական ինստիտուտի Եվրոպայի տարածաշրջանային ղեկավար Էրվե Փիշոնին:

Ողջունելով հյուրին՝ նախարար Սերգո Կարապետյանն ընդգծել է, որ Հայաստանը տարածաշրջանում Ֆրանսիայի ամենամտերիմ ու հավատարիմ գործընկերն է: Այդ իսկ պատճառով, գյուղատնտեսության նախարարությունը շատ է կարևորում ֆրանսիական կողմի հետ հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը: Իր հերթին, պարոն Էրվե Փիշոնը համառոտ ներկայացրել է ինստիտուտի գործունեությունը՝ տեղեկացնելով, որ այն ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին նմանատիպ կառույց է: Նրա տեղեկացմամբ՝ Ֆրանսիայի Ազգային աշխարհագրական ինստիտուտը հավաքագրում է աշխարհագրական տվյալներ, մասնավորապես՝ պտղատու և խաղողի այգիների, վարելահողերի և այլ հանդակների վերաբերյալ, որոնք կարող են օգտագործվել նաև գյուղատնտեսության բնագավառում:

➪2